Կարգապահական գործ թիվ ԿԳ-24160

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի
կարգապահական հանձնաժողովի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՓԱՍՏԱԲԱՆ ՄԻՆԱՍ ԳՈՒՐԳԵՆԻ ԱՄԻՐՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը **(այսուհետ նաև՝ Հանձնաժողով)**, Հանձնաժողովի նախագահ՝ Տաթևիկ Շալջյանի, Հանձնաժողովի զեկուցող անդամ՝ Կարինե Բաղդասարյանի, Հանձնաժողովի անդամներ՝ Վերոնիկա Ալեքսանյանի, Վահե Աստվածատրյանի, Գուրգեն Թորոսյանի և Կարեն Խալաթյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի,

մասնակցությամբ՝ Դիմող Լուսինե Կարապետյանի, իր ներկայացուցիչ՝ Կարինե Հովհաննիսյանի, ինչպես նաև փաստաբան՝ Մինաս Ամիրյանի,

քննության առնելով փաստաբան Մինաս Գուրգենի Ամիրյանին **(այսուհետ նաև՝ Փաստաբան կամ Պատասխանող)** (արտոնագիր՝ թիվ 163), կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը՝

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.</u>**

Լուսինե Կարապետյանը (**այսուհետ՝ նաև Դիմող**), դիմելով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ (այսուհետ՝ նաև Պալատ), տեղեկացրել է, որ դիմել է «ԱՄԻՐՅԱՆ» փաստաբանական գրասենյակ, փաստաբան Մինաս Ամիրյանին՝ իր հայրիկից որպես ժառանգություն ստացած գույքը դատարանի միջոցով բաժանելու համար: Փաստաբանական ծառայություն կատարելու նպատակով պահանջել է 5000 (հինգ հազար) ԱՄՆ դոլար, որից Դիմողը նախապես վճարել է 3000 (երեք հազար) ԱՄՆ դոլարը:

Ըստ Դիմողի վերջինս իր հայրիկից որպես ժառանգություն ստացել է տուն, երկու մեքենա և «Պարթև» ՍՊԸ-ն, որը Դիմողի եղբայրը շահագործել է և շահույթից իրեն մաս չի հատկացրել: Դիմել է Փաստաբանին որպեսզի դատարանում պաշտպանի իր շահերը, կիսի տունը, մեքենաները վաճառի, իսկ շահույթի իրեն չվճարած մասն էլ իրեն հատկացվի:

Թիվ ԿԳ-24160-2-Ա
06.11.2024թ.

Բողոքի էությունն այն է, որ գումարը ստանալուց հետո Փաստաբանը խաբեբայության է դիմել, քանի որ հայցադիմումը դատարան ներկայացնելուց հետո Փաստաբանը Դիմողին ասել է, որ չի պատրաստվում ծառայություններ մատուցել «Պարթև» ՍՊԸ-ի մասով, իսկ ինչ էլ որ արել է «Պարթև» ՍՊԸ-ի մասով, բարի կամքից ելնելով է գործել, դա չի մտնում Պայմանագրի գնի մեջ: Փաստաբանի կատարած աշխատանքը «Պարթև» ՍՊԸ-ի մասով այն է եղել, որ Դիմողի մայրն իր բաժնեմասի 80%–ը նվիրել է Դիմողին, որից հետո Դիմողը դարձել է տնօրեն և այդ ժամանակ պարզել, որ Դիմողի եղբայրը շահագործելով այդ ընկերությունը, մեծ գումարներ է ստացել շահույթից և իրեն չի վճարել: Փաստաբանը զուտ կազմակերպչական դեր է խաղացել: Այնուհետև Դիմողն ընկերության հաշվապահությունն իրականացնելու համար վճարել է ևս 200.000 ՀՀ դրամ Փաստաբանի ընկերոջը ոմն Հակոբի, որպեսզի ամսեկան հաշվետվություններ ներկայացնի, օրինական կերպով հետո նոր ընկերության գործունեությունը դադարեցնի, քանի որ Դիմողը չէր ցանկանում այն շահագործել:

Փաստաբանը թիվ ՇԴ3/0896/02/23 քաղաքացիական գործով 2024 թվականի հունվարի 30-ին, ժամը՝ 16:40-ին նշանակված դատական նիստին չի ներկայացել՝ ասելով, որ դատական այլ գործ ունի: Նույն գործով նշանակված հաջորդ դատական նիստին, որը նշանակվել էր 2024 թվականի ապրիլի 30-ին, ժամը՝ 12:00-ին Փաստաբանը նույնպես չի ներկայացել:

Դրանից հետո արդեն 2024 թվականի հունիսի 28-ին, ժամը՝ 10:00-ին նշանակված դատական նիստին է միայն Դիմողը պարզել, որ Փաստաբանը չներկայանալու միջնորդություն է ներկայացրել:

Դիմողը նշել է, որ ինքը բազմիցս զանգել է Փաստաբանին, սակայն վերջինս չի պատասխանել Դիմողի զանգերին:

Դիմողը խնդրել է կարգապահական պատասխանատվության ենթարկել Փաստաբանին:

Պալատը Դիմողին առաջարկել է ներկայացնել բացատրություն և համապատասխան ապացույցներ: Դիմողը 2024 թվականի հուլիսի 15-ին ներկայացրել է բացատրություն, որով նշել է, որ իր և Փաստաբանի միջև կնքված պայմանագիրը չի լուծվել:

Միաժամանակ, սույն կարգապահական վարույթի օրինականությունն ապահովելու և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները բացահայտելու նպատակով՝ 09.08.2024 թվականին Դիմողին առաջարկվել է՝ «Փաստաբանության մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 39.5 հոդվածի 5-րդ մասին համապատասխան, գրությունը ստանալու պահից մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել կարգապահական վարույթի համար անհրաժեշտ ապացույցներ, սակայն Դիմողը լրացուցիչ դիրքորոշում կամ ապացույց:

Դիմողը 23.09.2024թ. գրությամբ խնդրել է տրամադրել հավելյալ 14 օր դատարանից ձայնագրության կրիչների ստանալու և այն Պալատ ներկայացնելու համար:

2. <u>Պատասխանողի համառոտ բացատրությունները.</u>

Մինչև կարգապահական վարույթ հարուցելու հարցի լուծումը փաստաբան Մինաս Ամիրյանին առաջարկվել է՝ Օրենքի 39.3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն, ներկայացնել բացատրություն Լուսինե Կարապետյանի դիմումի վերաբերյալ:

Փաստաբանը 2024թ. հուլիսի 17-ին ներկայացրած բացատրությամբ տեղեկացրել է, որ Դիմողի պնդումներն իրականությանը չեն համապատասխանում և անհիմն են: Փաստաբանը նշել է, որ Դիմողը 23.08.2023 թվականին դիմել է «ԱՄԻՐՅԱՆ» փաստաբանական գրասենյակ, ներկայացրել է իր խնդիրը:

Այդ օրը մանրամասն անվճար խորհրդատվություն տալու միջոցով (խորհրդատվությունը տևել է մոտ 2 ժամ) Փաստաբանը Դիմողին ներկայացրել է ՀՀ օրենսդրությամբ սահմանված հնարավոր բոլոր լուծումները: Փաստաբանը Դիմողին բացատրել է, որ մինչ դատարան դիմելը կարելի է փորձել նաև արտադատարանական կարգով հարցին լուծում տալ, մասնավորապես՝ մյուս կողմին ծանուցում-առաջարկ ուղարկելու միջոցով:

Ծանուցում-առաջարկով սահմանված ժամկետից հետո, Դիմողը պնդել է, որ պատրաստ է կրել ցանկացած ֆինանսական ծախս և ուզում է հարցին միայն դատական կարգով լուծում տալ:

Նման պայմաններում ստանալով Դիմողի համաձայնությունը՝ վերջինիս հետ 23.08.2023 թվականին կնքվել է Ա/ՓԳ–02/006(2023) Հանձնարարության պայմանագիրը (**այսուհետ՝ Պայմանագիր**), որի 1.2 կետի հստակ սահմանվել է, որ «կողմերի փոխադարձ համաձայնությամբ, Հանձնարարողի կողմից հասարակ գրավոր ձևով տրված լիազորագրի հիման վրա Հանձնակատարը հանգես է գալու Հանձնարարողի անունից ներկայացնելով վերջինիս շահերը ՀՀ առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանում քաղաքացիական գործով ըստ հայցի Լուսինե Հաղթանակի Կարապետյանի ընդդեմ Հայկ Հաղթանակի Կարապետյանի ընդհանուր բաժնային սեփականություն հանդիսացող անշարժ գույքերից հայցվորի հասանելիք բաժնեմասը բնեղենով առանձնացնելու, իսկ անհնարինության դեպքում պատասխանողի կողմից հայցվորի բաժնի դիմաց փոխհատուցում տալուց հրաժարվելու դեպքում անշարժ գույքը հրապարակային սակարկություններով վաճառել և ստացված գումարը կողմերի միջև նրանց բաժիններին համաչափ բաշխելու պահանջների:»:

Պայմանագրից ակնհայտ է, որ Փաստաբանը որպես Հանձնակատար պետք է հանդես գա Դիմողի անունից՝ ներկայացնելով վերջինիս շահերը դատարանում, միայն ընդհանուր բաժնային սեփականության հանդիսացող անշարժ գույքերից հայցվորի հասանելիք բաժնեմասը բնեղենով առանձնացնելու, իսկ անհնարինության դեպքում պատասխանողի կողմից հայցվորի բաժնի դիմաց փոխհատուցում տալուց հրաժարվելու դեպքում անշարժ գույքը հրապարակային սակարկություններով վաճառելու և ստացված գումարը կողմերի միջև նրանց բաժիններին համաչափ բաշխելու պահանջների մասին դատական գործով:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ նմանատիպ դատական գործերով անհարժեշտ է իրականացնել փորձաքննություն՝ ուստի, սույն քաղաքացիական գործով 2024 թվականի ապրիլի 9-ին Փաստաբանի կողմից Դատարան է ուղարկվել դատաշինարարատեխնիկական և ապրանքագիտական համալիր փորձաքննություն նշանակելու մասին միջնորդությունը (միջնորդությանը կցվել է ապացույց փոստային անդորրագիր, առ այն, որ սույն միջնորդությունը ուղարկվել է նաև պատասխանող կողմին):

2024 թվականի հունիսի 28-ին դատական նիստին չմասնակցելու մասով Փաստաբանը հայտնել է, որ հունիսի 27-ին երեկոյան ժամերին իրեն զանգահարել է պատասխանող Հայկ Կարապետյանի փաստաբան Տիրուհի Ոսկանի Վարդանյանը (արտոնագիր թիվ 2908) և հայտնել է, որ թիվ ՇԴ3/0896/02/23 քաղաքացիական գործով 2024 թվականի հունիսի 28-ին, ժամը 10:00-ին նշանակված դատական նիստին պետք է կասեցման միջնորդություն ներկայացնի, քանի որ թե Հայկ Կարապետյանը, թե Դիմողը ՀՀ քննչական կոմիտեի Շիրակի մարզային քննչական վարչություն համապատասխանաբար հաղորդումներ են ներկայացրել միմյանց դեմ:

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ հայցվոր կողմին և նրա ներկայացուցչին կասեցման միջնորդությունը նախապես չի ուղարկվել և հայցվոր կողմը չի ծանոթացել միջնորդությանը ու հնարավորություն չի ունեցել դիրքորոշում հայտնելու՝ ապա, փաստաբան Տիրուհի Վարդանյանի հետ հեռախոսով պայմանավորվածություն է ձեռք բերվել, որպեսզի այդ հիմքով 2024 թվականի հունիսի 28-ին նշանակված նախնական դատական նիստը հետաձգվի: Հետևաբար, հաշվի առնելով փաստաբանների միջև ձեռք բերված պայմանավորվածությունը, այլևս անհրաժեշտություն չի եղել ներկա գտնվել 28.06.2024թ, ժամը՝ 10:00-ին Շիրակի մարզում նշանակված դատական նիստին, քանի որ այն հետաձգվելու էր: Հավելել է, որ ներկայումս թիվ ՇԴ3/0896/02/23 քաղաքացիական գործով նախնական դատական նիստերը շարունակվում են, և հաջորդ դատական նիստը նշանակվել է 2024 թվականի հոկտեմբերի 1-ին, ժամը 14:30–ին: Միևնույն ժամանակ Փաստաբանը բացատրությանը կից ներկայացրել է դեռևս 13.06.2024թ. կազմված և ուղարկված միջնորդություն 28.06.2024թ, ժամը՝ 10:00-ին նշանակված դատական նիստը Փաստաբանի և Դիմողի բացակայությամբ անցկացնելու մասին:

Փաստաբանը նաև նշել է, որ Դիմողին բազմիցս հայտնել է, որ վերջինիս իրավունք է վերապահվում նոր հայցադիմումով (շահութաբաժնի չվճարված մասի գումարների բռնագանձման պահանջի հայցով) դիմել դատարան, բացատրելով, որ գումարի բռնագանձման հայցադիմումի պահանջը չի կարող նույնականացվել ՇԴ3/0896/02/23 քաղաքացիական գործով պահանջի հետ, քանի որ հայցի առարկաները և դատավարության կողմերը տարբեր են: Մինչդեռ Դիմողը չի ցանկացել դատարան դիմել և բանավոր հրաժարվել է այդ ծառայություններից՝ պատճառաբանելով, որ չի կարող դատարանին վճարել գումարի բռնագանձման հայցադիմումի համար 3% պետական տուրքի գումարը և փաստաբանի ծառայության գումարը:

23.08.2023 թվականի գրավոր լիազորագրով ստանձնած պարտավորությունը չի դադարել, լիազորագիրը գործում է 3 տարի ժամկետով և Դիմողն առ այսօր չի դիմել լիազորագրով լիազորությունները վերացնելու [դադարեցնելու] համար:

Փաստաբանը խնդրել է մերժել Դիմողի դիմումի հիման վրա կարգապահական վարույթի հարուցումը:

Միաժամանակ, սույն կարգապահական վարույթի օրինականությունն ապահովելու և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները բացահայտելու նպատակով՝ 09.08.2024 թվականին Փաստաբանին առաջարկվել է՝ Օրենքի 39.5 հոդվածի 5-րդ մասին համապատասխան, գրությունը ստանալու պահից մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել կարգապահական վարույթի համար անհրաժեշտ ապացույցներ, սակայն Դիմողը լրացուցիչ դիրքորոշում կամ ապացույց:

Փաստաբանը 31.07.2024թ. և 13.08.2023թ. ներկայացրած բացատրություններով պնդել է նախկինում արտահայտած դիրքորոշումը, հայտնելով, որ 23.08.2023թ. Հանձնարարության պայմանագրի առարկայից բխող բոլոր պարտավորությունները կատարել է ազնվորեն և բարեխղճորեն:

Փաստաբանը նշել է, որ գործի ընթացքի վերաբերյալ կանոնավորապես տեղեկացրել է Դիմողին «WhatsApp» հավելվածի միջոցով՝ ի հավաստում ներկայացնելով ապացույցները:

3. <u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը</u>.

Փաստաբանների պալատի նախագահի 25.07.2024թ. թիվ 311-Ա/ԿԳ-24160 որոշմամբ փաստաբան Մինաս Գուրգենի Ամիրյանի նկատմամբ Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Պալատի ընդհանուր ժողովի 2019 թվականի հոկտեմբերի 19-ի թիվ 1-Լ որոշմամբ հաստատված փաստաբանի վարքագծի կանոնագրքի **(այսուհետ նաև՝ Կանոնագիրք) 2.7.2, 3.5.5 և 3.6.1** ենթակետերի խախտման հատկանիշներով հարուցվել է կարգապահական վարույթ:

02.08.2024թ. կարգապահական գործի նախապատրաստումը հանձնարարվել է Պալատի աշխատակազմի սպասարկող անձնակազմի աշխատակից՝ Գարիկ Հախնազարյանին (**այսուհետ նաև՝ Աշխատակից**):

3.1. <u>Վկաների ցուցմունքները</u>.

Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

4. <u>Կարգապահական գործ նախապատրաստող Աշխատակցի եզրակացությունը և գործի հանձնումը Հանձնաժողովին</u>.

Գործի նախապատրաստման արդյունքում Աշխատակիցը 02.10.2024թ. կազմել է եզրակացություն:

Եզրակացությամբ հաստատված են համարվել սույն որոշման 5-րդ գլխի 1-3-րդ

կետերում շարադրված փաստերը:

Հանձնաժողովի նիստը տեղի է ունեցել 06.11.2024թ. ժամը 18:30-ին ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

5. **Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.**

Հանձնաժողովը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև կարգապահական գործը նախապատրաստող Աշխատակցի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը.

1. Փաստաբան Մինաս Ամիրյանը ստանձնել է Լուսինե Կարապետյանի իրավունքների պաշտպանությունը՝ ՀՀ առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանում՝ քաղաքացիական գործով ըստ հայցի՝ Լուսինե Հաղթանակի Կարապետյանի ընդդեմ Հայկ Հաղթանակի Կարապետյանի ընդհանուր բաժնային սեփականություն հանդիսացող **անշարժ գույքերից** հայցվորի հասանելիք բաժնեմասը բնեղենով առանձնացնելու, իսկ անհնարինության դեպքում պատասխանողի կողմից հայցվորի բաժնի դիմաց փոխհատուցում տալուց հրաժարվելու դեպքում անշարժ գույքը հրապարակային սակարկություններով վաճառելու և ստացած գումարը կողմերի միջև նրանց բաժիններին համաչափ բաշխելու պահանջների շրջանակներում: *Սույն փաստը հաստատվում է կողմերի միջև կնքված 23.08.2023թ. Ա/ՓԳ–02/006(2023) Հանձնարարության պայմանագրի 1.2 կետով, այլ ծառայությունների մատուցման պարտավորություն Փաստաբանը չի ունեցել:*

2. Փաստաբան Մինաս Ամիրյանը չի մասնակցել թիվ ՇԴ3/0896/02/23 քաղաքացիական գործով 30.01.2024թ. ժամը՝ 16:40-ին, 30.04.2024թ. ժամը՝ 12:00-ին և 28.06.2024թ. ժամը՝ 10:00-ին նշանակված դատական նիստերին, իսկ 09.04.2024թ. Փաստաբանը միջնորդություն է ներկայացրել գործն առանց իրեն և Դիմողի քննելու վերաբերյալ: *Սույն փաստը հաստատվում է կողմերի բացատրությամբ, ինչպես նաև դատարան ներկայացրած Փաստաբանի 09.04.2024թ., 18.01.2024թ. և 13.06.2024թ. միջնորդություններով:*

3. Փաստաբան Մինաս Ամիրյանը չի համաձայնեցրել Լուսինե Կարապետյանի հետ 09.04.2024թ. դատարանին ներկայացրած միջնորդությունները, որոնք անմիջականորեն առնչվում են վերջինիս իրավունքներին ու շահերին, ինչպես նաև չի տեղեկացրել 30.04.2024թ. նշանակված դատական նիստի ժամի մասին: *Սույն փաստը հաստատվում է կողմերի բացատրությամբ, ինչպես նաև «WhatsApp» հավելվածի նամակագրության լուսապատճեններով:*

6. **Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.**

Պալատի աշխատակազմի ղեկավարի կողմից տրված տեղեկանքի համաձայն՝ Մինաս Ամիրյանը փաստաբան է հանդիսանում 21.09.2005 թվականից և 2019-2024թթ. ընկած ժամանակահատվածում չունի կարգապահական տույժ:

7. <u>Պալատի Հանձնաժողովի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

Հանձնաժողովը գտնում է, որ փաստաբան Մինաս Գուրգենի Ամիրյանը ենթակա է կարգապահական պատասխանատվության՝ Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Կանոնագրքի 2.7.2, 3.5.5 և 3"6"1 ենթակետերի խախտման համար:

Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է՝ ազնվորեն և բարեխղճորեն պաշտպանել վստահորդի իրավունքները և օրինական շահերը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված բոլոր միջոցներով ու եղանակներով, պահպանել Օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջները:*

Կանոնագրքի 2.7.2-րդ ենթակետի համաձայն՝ *Փաստաբանը պարտավոր է վստահորդին բարեխիղճ իրավական օգնություն ցույց տալ իր մասնագիտական կարողությունների սահմաններում, ինչը ենթադրում է իրավունքի համապատասխան ճյուղի իմացություն, վստահորդի հանձնարարությանը վերաբերող բոլոր հանգամանքների ուսումնասիրություն, **<u>հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարում:</u>***

Կանոնագրքի 3.5.5-րդ ենթակետի համաձայն՝ *Փաստաբանը պարտավոր է վստահորդին իրավաբանական օգնություն ցույց տալիս իր մասնագիտական պարտականությունները կատարել ողջամտորեն, բարեխղճորեն, որակավորված, սկզբունքայնորեն և ժամանակին, ինչը ներառում է՝*

ա. նյութերի ուսումնասիրությունը,

բ. վերաբերելի իրավական ակտերի ուսումնասիրությունը,

գ. վստահորդին վերջինիս հանձնարարության կատարման կապակցությամբ հնարավոր իրավական հետևանքների առաջացման մասին իրազեկումը,

դ. վստահորդի հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարումը:

Կանոնագրքի 3.6.1. ենթակետի համաձայն՝ *Փաստաբանը պարտավոր է կանոնավորապես տեղեկացնել վստահորդին հանձնարարության կատարման ընթացքի մասին և պատասխանել նրան հետաքրքրող հարցերին:*

Փաստաբանի մասնագիտական բարձր որակավորումը և իր պարտականությունների բարեխիղճ կատարումը փաստաբանության ինստիտուտի հանրային ընկալման առանցքային տարրերից են, որոնց բացակայությունն արժեզրկում է փաստաբանի՝ որպես

իրավապաշտպան և արդարադատության կայացմանը նպաստող գործառույթներ իրականացնող անձի հասարակական նշանակությունը:

Նշվածի հաշվառմամբ, փաստաբանի վարքագծի կանոններով փաստաբանի համար սահմանվում են որոշակի պարտականություններ, այն է՝ ելնել վստահորդի նպաստավոր շահերից, բարեխղճորեն և ժամանակին պաշտպանել վստահորդի իրավունքներն ու օրինական շահերը:

Ավելին, տրված հանձնարարության շրջանակներում փաստաբանը պետք է կիրառի օրենքով չարգելված բոլոր հնարավոր միջոցները վստահորդի շահերը լավագույնս պաշտպանելու համար: Ընդ որում, խոսքը վերաբերում է այնպիսի գործողությունների կատարմանը, որոնք փաստացի արդյունավետ կարող են լինել վստահորդի իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանության պատշաճ ներկայացման համար:

Սույն կարգապահական գործի շրջանակներում Դիմողի և Փաստաբանի կողմից ներկայացված բացատրությունների և ապացույցների ուսումնասիրությունը վկայում է այն մասին, որ Փաստաբանը ստանձնել է Դիմողի իրավունքների ու շահերի պաշտպանությունը ՀՀ առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանում՝ քաղաքացիական գործով ըստ հայցի Լուսինե Հաղթանակի Կարապետյանի ընդդեմ Հայկ Հաղթանակի Կարապետյանի ընդհանուր բաժնային սեփականություն հանդիսացող անշարժ գույքերից հայցվորի հասանելիք բաժնեմասը բնեղենով առանձնացնելու, իսկ անհնարինության դեպքում պատասխանողի կողմից հայցվորի բաժնի դիմաց փոխհատուցում տալուց հրաժարվելու դեպքում անշարժ գույքը հրապարակային սակարկություններով վաճառել և ստացած գումարը կողմերի միջև նրանց բաժիններին համաչափ բաշխելու պահանջների շրջանակներում:

Հիշատակված գործով Փաստաբանը Դիմողի շահերի պաշտպանության համար չի կատարել անհրաժեշտ գործողությունները վերջինիս իրավունքների արդյունավետ պաշտպանության համար: Մասնավորապես, Փաստաբան Մինաս Ամիրյանը չի մասնակցել թիվ ՇԴ3/0896/02/23 քաղաքացիական գործով 30.01.2024թ. ժամը՝ 16:40-ին, 30.04.2024թ. ժամը՝ 12:00-ին և 28.06.2024թ. ժամը՝ 10:00-ին նշանակված դատական նիստերին, իսկ 09.04.2024թ. Փաստաբանը միջնորդություն է ներկայացրել գործն առանց իրեն և Դիմողի քննելու վերաբերյալ:

Հանձնաժողովը հարկ է համարում առանձին-առանձին անդրադառնալ Փաստաբանի կողմից նշված օրերին դատական նիստերին չմասնակցելու պատճառներին և հետևանքներին: Այսպիսով, առաջին դեպքում՝ 30"01"2024թ" ժամը՝ 16:40-ին նշանակված դատական նիստի Փաստաբանը չի մասնակցել, մեկ այլ վարչական գործով նույն օրը ժամը՝ 15:20-ին դատական նիստի մասնակցելու պատճառով:

Հաջորդ՝ 30"04"2024թ" ժամը՝ 12:00-ին նշանակված դատական նիստից առաջ 09"04"2024թ" Փաստաբանը ներկայացրել է երկու միջնորդություն՝ դատաշինարարատեխնիկական և ապրանքագիտական փորձաքննություն նշանակելու

վերաբերյալ և գործը հայցվոր կողմի և նրա ներկայացուցչի բացակայությամբ քննելու միջնորդություն:

Ինչ վերաբերում է երրորդ՝ 28"06"2024թ" ժամը՝ 10:00-ին կայանալիք դատական նիստին, Փաստաբանը հայտնել է, որ հակառակ կողմի ներկայացուցչի հետ պայմանավորվածություն է ձեռք բերել, դատական նիստը հետաձգելու վերաբերյալ, քանի որ քրեական վարույթի նախաձեռնությամբ պայմանավորված վերջինս կասեցման միջնորդություն է ներկայացնելու:

Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում ընդգծել այն հանգամանքը, որ ցանկացած դեպքում հանձնարարության բարեխիղճ կատարման ուղղությամբ միջոցներ ձեռնարկելը փոխկապակցված է դրանց արդյունավետության հետ: Ընդ որում, հաշվի առնելով փաստաբանի իրավապաշտպան առաքելությունը և համապատասխան իրավունքի իրացման անհրաժեշտ և օգտավետ գործողությունների կատարման կարևորությունը՝ փաստաբանն՝ իր վստահորդին ցուցաբերելով բարեխիղճ իրավաբանական օգնություն պարտավոր է ոչ միայն կազմել և դատարան ներկայացնել անհրաժեշտ դատավարական փաստաթղթերը, այլ նաև անձամբ մասնակցել նշանակված դատական նիստերին: Ավելին, Հանձնաժողովը հարկ է համարում արձանագրել, որ դատական նիստին չմասնակցելը ինքնին չի կարող համարվել Օրենքի և Կանոնագրքի պահանջների հակասող վարքագիծ միայն այն դեպքում, երբ դատական նիստին չմասնակցելը Փաստաբանի և վստահորդի մշակած մարտավարությունն է և Փաստաբանը պատշաճ եղանակով տեղեկացրել է այդ մասին իր վստահորդին ու ստացել համաձայնություն:

Անհրաժեշտ է անդրադառնալ նաև Փաստաբանի 09"04"2024թ" ներկայացրած թվով երկու միջնորդություններին և այն դիտարկել բարեխիղճ իրավական օգնություն ցուցաբերելու Փաստաբանի պարտականության լույսի ներքո: Այսպիսով, համաձայն առաջին միջնորդության Փաստաբանը, վկայակոչելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 147-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթը, խնդրել է թիվ ՇԴ/0896/02/23 քաղաքացիական գործով 30"04"2024թ" նշանակված դատական նիստը անցկացնել հայցվոր կողմի և նրա ներկայացուցչի բացակայությամբ: Միաժամանակ, 09"04"2024թ" երկրորդ միջնորդությամբ խնդրել է նշանակել դատաշինարարատեխնիկական և ապրանքագիտական փորձաքննություն և կրկին խնդրել է դատարանին որոշումը կայացնի հայցվոր կողմի և նրա ներկայացուցչի բացակայությամբ: Այս միջնորդությունները Փաստաբան Մինաս Ամիրյանը ևս չի համաձայնեցրել Լուսինե Կարապետյանի հետ, ինչը հաստատվում է կարգապահական նիստի ընթացքում արտահայտած կողմերի դիրքորոշմամբ:

Հանձնաժողովի գնահատմամբ, Փաստաբանի ներկայացված միջնորդությունները Դիմողի հետ չհամաձայնեցնելը առհասարակ չեն բխել վերջինիս նպաստավոր շահերից և Դիմողի իրավունքների արդյունավետ պաշտպանությունից: Հարկ է նշել, որ Դիմումագրի առարկան կայանում է դատարանում հայցվորի իրավունքները և շահերը ներկայացնելու

մեջ, ուստի՝ Փաստաբանի ներկայացրած միջնորդությունները տրամաբանորեն հակասում են նրա պայմանագրային պարտավորություններին: Այս կապակցությամբ հարկ է նշել, որ թեև կողմերի միջև ծագած պայմանագրային հարաբերությունների շրջանակներում Փաստաբանը ինքն է ընտրել ծառայությունների տրամադրման առավել արդյունավետ տարբերակը, այնուամենայնիվ, այդ տարբերակը չպետք է բացառեր քաղաքացիական գործով դատական նիստերի մասնակցությունը: Հակառակ դեպքում, Դիմողը բախվում է այն բացասական հետևանքների հետ, որոնք առաջացել են փաստաբանի դրսևորած վարքագծով պայմանվորված: Տվյալ դեպքում, Դիմողը ներկայացել է դատական նիստին և հայտնվել անելանելի իրավիճակում, քանի որ վերջինիս փաստաբանը առանց իրեն տեղեկացնելու և առանց վստահորդի համաձայնությունը ստանալու չի ներկայացել դատական նիստին, ինչի արդյունքում Դիմողը զրկվել է իր շահերի պաշտպանության իրավունքից, ինչն ակնկալել է Փաստաբանին դիմելով:

Հանձնաժողովը գտնում է, որ Փաստաբանը, առաջնորդվելով վստահորդի իրավունքների արդյունավետ պաշտպանությունից, պետք է ջանքեր գործադրեր և չսահմանափակվեր միան անհրաժեշտ դատավարական փաստաթղթերի կազմման և դատարան ներկայացման գործողություններով: Այլ կերպ ասած, Փաստաբանը պարտավոր էր ներկայանալ նշանակված դատական նիստերին, առանց Դիմողի հետ համաձայնեցման չներկայացներ միջնորդություն գործը իրենց բացակայությամբ քննելու, ինչպես նաև պատշաճ տեղեկացներ Դիմողին 30.04.2024թ. նշանակված դատական նիստի ժամի վերաբերյալ:

Սուն պարագայում, Փաստաբանի դրսևորած վարքագիծը ոչ միան հակասում է բարեխիղճ իրավական օգնություն ցուցաբերելու նրա պարտականության, այլ նաև վերջինիս Դիմողին հանձնարարության ընթացքի վերաբերյալ կանոնավորապես տեղեկացնելու պարտականության հետ:

Այս համատեքստում, կարգապահական նիստի ընթացքում Փաստաբանի արտահայտած դիրքորոշման համաձայն՝ վերջինս չի տեղեկացրել և համաձայնեցրել Դիմողի հետ 28.06.2024թ. դատական նիստի չմասնակցելու իր մտադրությունը: Իր հերթին Դիմողը ներկայացել է դատական նիստին և դատարանում տեղեկացել, որ Փաստաբանը չի մասնակցելու դատական նիստի և հայտնվելով անելանելի իրավիճակում խնդրել է դատարանին ժամանակ տրամադրել մինչև 01"10"2024թ" որպեսզի վերջինս հնարավորություն ունենա նոր փաստաբան գտնելու և գործում ներգրավվածությունը ապահովելու համար:

Ընդ որում, հարկ է ընդգծել նաև, որ Դիմողին գործի ընթացքի մասին չտեղեկացնելը դրսևորվել է նաև 30"04"2024թ" նշանակված դատական նիստի վերաբերյալ Դիմողին ժամի վերաբերյալ տեղեկություն չհայտնելու մեջ: Տվյալ դեպքում, ըստ ներկայացված «WhatsApp» հավելվածի կողմերի նամակագրության լուսապատճենի պարզ է դառնում, որ Դիմողը 29.04.2024թ. Փաստաբանին պատկանող +374 93 583 593 հեռախոսահամարին

հաղորդագրություն է ուղարկել հետևյալ բովանդակությամբ. *«Մինաս ժամի քանիսին է դատը»:* Հարկ է նշել, որ ներկայացված ապացույցներով չի հիմնավորվում Փաստաբանի կողմից Դիմողին հետաքրքրող հարցին պատասխանելու հանգամանքը, ինչպես նաև Փաստաբանը կարգապահական նիստի ընթացքում ընդունել է այն փաստը, որ չի տեղեկացրել Դիմողին: Բացի այդ, Դիմողը նշել է, որ միայն դստեր օգնությամբ է «Datalex» դատական տեղեկատվական համակարգի միջոցով տեղեկացել 30"04"2024թ" նշանակված դատական նիստի ժամի վերաբերյալ:

Վերոգրյալը հաշվի առնելով՝ Հանձնաժողովը գտնում է, որ Փաստաբանն իր վստահորդի շահերը ներկայացնելիս թույլ է տվել այնպիսի խախտումներ, որոնք չեն տեղավորվում Օրենքով և Կանոնագրքով սահմանված փաստաբանի բարեխիղճ իրավական օգնություն ցուցաբերելու և հանձնարարության կատարման ընթացքի վերաբերյալ վստահորդին կանոնավորապես տեղեկացնելու ողջամիտ սահմաններում:

Նման պայմաններում, Հանձնաժողովը՝ գնահատելով սույն կարգապահական գործի քննության ընթացքում ձեռք բերված նյութերը, ինչպես նաև Դիմողի և Փաստաբանի կողմից ներկայացրած բացատրություններն ու ապացույցներն իրենց ամբողջության մեջ, գտնում է, որ Փաստաբանի վարքագծում **առկա են Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Կանոնագրքի 2.7.2, 3.5.5 և 3"6"1 ենթակետերի պահանջների խախտման հատկանիշները**:

8. <u>Կարգապահական տույժի ընտրությունը.</u>

Օրենքի 39.10 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *փաստաբանի կարգապահական պատասխանատվության հարցը քննելուց հետո փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը կարող է փաստաբանի նկատմամբ կիրառել կարգապահական տույժերի հետևյալ տեսակներից մեկը, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքի.*

1) նկատողություն.

2) խիստ նկատողություն.

3) լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցել.

4) տուգանք.

5) փաստաբանի արտոնագրի գործողության դադարեցում:

Օրենքի 39.10 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *փաստաբանի նկատմամբ կիրառվող կարգապահական տույժը պետք է համաչափ լինի կատարված խախտմանը: Կարգապահական տույժ կիրառելիս փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը հաշվի է առնում նաև խախտման հետևանքները, փաստաբանի անձը, մեղքի աստիճանը, առկա տույժերը, փաստաբանին բնութագրող ուշադրության արժանի այլ հանգամանքներ:*

Անդրադառնալով նշանակվող կարգապահական տույժի տեսակին՝ հաշվի է առնելով

վերոնշյալ հանգամանքները, այդ թվում՝ խախտման բնույթը, մեղքի աստիճանը, ինչպես նաև Փաստաբանի անձը բնութագրող հանգամանքները: Հանձնաժողովը գտնում է, որ սույն կարգապահական գործով Փաստաբանի նկատմամբ պետք է կիրառել ամենամեղմ՝ «նկատողություն» կարգապահական տույժի տեսակը: Հաշվի առնելով այն, որ Փաստաբանը պետք է գիտակցեր, որ իր գործողություններից ու անգործությունից ուղղակիորեն կախված է Դիմողի իրավունքների ու շահերի պաշտպանության արդյունավետ ապահովումը, որպիսի պայմաններում էլ պետք է կանխատեսեր իր վարքագծի հնարավոր հետևանքները, առնվազն ձեռնարկելով ողջամիտ ջանքեր Դիմողի շահերը լավագույնս ներկայացնելու համար, որը պետք է իրականացվեր թիվ ՇԴ/0896/02/23 քաղաքացիական գործով դատական նիստերին մասնակցելու միջոցով կամ առնվազն Դիմողի հետ համաձայնեցներ իր գործողությունները և կանոնավորապես տեղեկացներ գործի ընթացքի վերաբերյալ:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով Օրենքի 11.1-րդ հոդվածի 3-րդ մասի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի, 8-րդ մասի, 39.10-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջներով,

Հանձնաժողովը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Փաստաբան Մինաս Գուրգենի Ամիրյանի (արտոնագիր՝ թիվ 163) նկատմամբ կիրառել կարգապահական տույժ՝ «նկատողություն»՝ «Փաստաբանության մասին» օրենքի 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Կանոնագրքի 2.7.2, 3.5.5 և 3"6"1 ենթակետերի խախտման համար:

2. Հանձնարարել Հանձնաժողովի նիստերի քարտուղարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

Ծանոթություն. *Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ փաստաբանների պալատի խորհուրդ կամ դատական կարգով այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն Փաստաբանի կողմից ստանալու հաջորդ օրվանից:*

ՀՀ փաստաբանների պալատի
կարգապահական հանձնաժողովի
նախագահ՝ **Տաթևիկ Շալջյան**

Թիվ ԿԳ-24160-2-Ա
06 նոյեմբերի 2024թ.
ք.Երևան